ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

(Մոկաց հարքատով)

Ա.

ՍԱՆԱՍԱՐԻ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԾՆՈՒՆԴԸ

Կար չկար, մի ժամանակ մի կռապաշտ թագաւոր կար, մի խաչապաշտ թագաւոր։ Էն ժամանակ որ թագաւոր որ զօրեղ կ'ըլ-նի՝ էն մէկէլից խարջ[1]) կ'առնի. կռապաշտ թագաւոր խաչապաշտ թագաւորից զօրեղ կ'ըլնի։ Օրէրուց մէկ օր նրա խարջ առնողներ էկան խաչապաշտ թագաւորի մօտ, տեսան մէ շատ խորոտ[2]) աղ-ջիկ ունէր. գինացին իւրանց թագաւորին ասըցին. «Քեռ տուն Աս-տուած շէնի, դիւ ի՞նչ կ'անես մալ, խազինայ[3])։ դովլաթ[4])։ քեզ ունես խոզ, ապրանք, էրկիր, մալ, խազինայ, դովլաթ. խաչապաշտ թագաւորին մէ էն տեսակ աղջիկ ունի, որ ամեն մի բան կ'ածի»։

Խելք ընկաւ կռապաշտ թագաւորին, յերեկից[5]) խաչապաշտ թագաւորի մօտ. «Քեռ աղջիկ տաս ինձ»։

Խաչապաշտ թագաւոր ասաց. «Ես խաչապաշտ, դիւ կռապաշտ, ի՞նչ բան ա, որ ես իմ աղջիկ տամ քեզ»։

Կռապաշտ թագաւոր ասաց. «Կռուով էղի՝ տի տաս, խաթ-րով էղի՝ տի տաս»։

---

[1]) Հարկ։ [2]) Գեղեցիկ։ [3]) Գանձ։ [4]) Հարստութիւն։ [5]) Ուղարկեց։